ՋՐԻ ՈԳԻՆԵՐԻ ՏԻՊԱԲԱՆԱԿԱՆ ԵՒ ԳՈՐԾԱՌՈՒԹԱՅԻՆ ՔՆՆՈՒԹԻՒՆ

(ըստ հայ ժողովրդական զրոյցների)

ՅԱՍՄԻԿ ԳԱԼՍՏԵԱՆ (hasmikgalstyan1979@gmail.com)

ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

Հայ ստորին առասպելաբանութեան[1] մէջ մտնող չար ոգիների շարքում առանձնանում են ջրին առնչուող ոգիները, որոնք զուգահեռներ ունեն աշխարհի շատ ժողովուրդների հաւատալիքներում: Ոգիների այս խմբի մասին ժողովրդական զրոյցները քանակական առումով բաւականին քիչ են, թէեւ աշխարհագրօրէն ունեն լայն ընդգրկում: ԺԹ. դարի կէսերից մինչեւ Ի. դարասկզբի գրաւոր աղբիւրներում առկայ զրոյցներում յիշատակուող ջրի ոգիների նախատիպերը տեսնում ենք *Աստուածաշնչ*ում, Ե. դարի հայ պատմիչների երկերում եւն.:

ՋՐԻ ՈԳԻՆԵՐԻ ԱՆՈՒԱՆՈՒՄՆԵՐԸ

Ըստ հայկական զրոյցների եւ ժողովրդական հաւատալիքների՝ փերիները, յաւերժահարսները, ջրանուշները, հրեղէն աղջիկները, ջրի աղջիկները, երկնքի աղջիկները, փերի ղզիները, հնարքներն ու ջրի պառաւները ջրերի ու անտառների ոգիներ են եւ հիմնականում հանդէս են գալիս «**փերիներ**» ընդհանուր անուան տակ[2]: Ըստ Ստեփանոս Մալխասեանցի՝ **փերի** բառը փոխառուած է պահլաւերէն **parik** բառից, որ նշանակում է չար ոգի, սատանայի էգ: Սոգդիերէնում եւ պարսկերէնում՝ **parik, pari,** նշանակում է յաւերժահարս, աննման գեղեցկութեամբ բարի ոգի, փերի, իսկ զենդերէնում **parikā**ն կախարդ կինն է[3]:

---

[1] «Ստորին առասպելաբանութիւն» (lower mythology) եզրոյթն առաջին անգամ գիտական շրջանառութեան մէջ է դրել գերմանացի ազգագրագէտ, Կրիմ եղբայրների առասպելաբանական դպրոցի հետեւորդ Վիլհելմ Մանհարդտը: Նա համարում է, որ «վերին աստուածութիւնների շարքում գոյութիւն ունեն այլ առասպելաբանութեան կերպարներ, որոնք, առանց որեւէ հեգնանքի, անուանում է «ստորին», որտեղ գերակշռում են փերիներն ու ոգիները», Дж. Коккьяра, *История фольклористики в Европе (Բանագիտութեան պատմութիւնը Եւրոպայում),* Մոսկուա, 1960, էջ 418-19:

[2] Ազգագրագէտ Էմմա Պետրոսեանի բանաւոր հաղորդմամբ՝ իր հայրը երեխաներին սաստել կամ վախեցրել է «ջրի պիզպիզ» կոչուող ոգու անունը տալով:

[3] Ստ. Մալխասեանց, *Հայերէն բացատրական բառարան, հտր. 4*, Հայկական ՍՍՌ պետական հրատ., Երեւան, 1944, էջ 83-84, 497:

Հայ առասպելաբանութեան մէջ եւ *Աստուածաշնչ*ում[4] յիշատակւում է նաեւ **յուշկապարիկը[5],** որը իրանեան փոխառութիւն է՝ կազմուած «յուշկ» եւ «պարիկ» բառերից, եւ յունարէնից թարգմանաբար նշանակում է «իշացուլ»[6]: Հայր Ղեւոնդ Ալիշանը գրում է, որ ծովային հրէշների փոխարէն՝ երբեմն ասուել է նաեւ յուշկապարիկ եւ վկայակոչում է Փիլոնի գրուածքների մեկնիչին, ով պարիկների (Syrènes) երգը այսպէս է բացատրում. «*Յուշկապարիկն է, որ մինչեւ ի պորտն կնոջ պատկեր է, եւ անհնարին քաղցր ձայն ունի, եւ պատրէ զլսողսն*»[7]: Մէկ ուրիշը գրում է «*Յուշկապարիկ՝ Համբարու է. կէս անձինն կնոջ է եւ կէսն թռչնոց, եւ յոյժ քաղցրաձայն է, եւ ի ծովու բնակէ. ոմանք ասեն՝ հաւ է քաղցրաձայն անապատասէր, կամ դեւ մարդատեսիլ. ոմանք Յուշկապար, պորտի վերն մարդոյ է, անդի վայրն՝ իշոյ*»[8]: Մեջբերելով Եպիփանոս բարոյախօսին՝ ասում է. «*Վասն Յուշկապարկաց, թէ մահաբերք են, եւ ի ծովու են, եւ երգեն երգս քաղցրաձայնս, եւ կերպարանք նոցա, եւ այլն: Նոյնպէս եւ իշացուլն, մի կողմն արու մարդոյ է, եւ վայր կողմն իշոյ*»[9]: Այս ամէնից պարզ է դառնում, որ յուշկապարը հայերին ծանօթ է ու բնիկ[10]: Գեղարուեստական գրականութեան մէջ յուշկապարիկը հեղինակի կողմից բացատրւում է հետեւեալ կերպ. «*Յուշկապարիկ» են ասւում այն կենդանիքը, որոնք կէսից վեր ուրիշ կենդանի են, կէսից վայր՝ ուրիշ: Օրինակ՝ կան այնպիսի կենդանիք, որոնք գօտկից վերեւ կնկայ նման են, իսկ գօտկից ներքեւ՝ ձկան, թռչունի, իշի եւ այլն*»[11]:

Ըստ բանահիւսական նիւթերի՝ Հայաստանի տարբեր գաւառներում յուշկապարիկի գոյութեանը հաւատում էին մինչեւ Ի. դարը: Կարելի է ասել, որ ժամանակի ընթացքում յուշկապարիկի առասպելաբանական ընկալումները հետզհետէ թուլանում են, ոգու մասին պատկերացումները փոխւում, եւ զրոյցներում այն ներկայանում է արդէն զուտ մարդակերպ՝ զրկուած իր առասպելական խառնածին բնոյթից, կերպարանքից ու գործառոյթից: Նիկոմիդիայի (Իզմիթ) գիւղերում (Արմաշ) յուշկապարիկն ընկալւում ու պատ-

---

[4] Եսայի 13:21-22, 34:11-14:

[5] Յուշկապարիկի մասին տե՛ս՝ Հ. Հայրապետեան, «Յուշկապարիկի գաղափարը հայ միջնադարեան հաւատալիքներում», *Լրաբեր հասարակական գիտութիւնների*, 7(571):1990, էջ 53-61:

[6] Եզնիկ Կողբացի, *Եղծ աղանդոց*, թարգ. եւ ծանօթ.՝ Ա. Աբրահամեան, Երեւանի համալսարանի հրատ., Երեւան, 1994, էջ 80, 309:

[7] Հայր Ղեւոնդ Ալիշան, *Հայոց հին հաւատքը կամ հեթանոսական կրօնը*, «Գրիգոր Տաթեւացի» ՍՊԸ, Երեւան, 2002, էջ 99:

[8] Նոյն:

[9] Նոյն:

[10] Նոյն:

[11] Ղ. Աղայեան, «Արութիւն եւ Մանուէլ, ազգային վէպ», *Երկերի ժողովածու, հտր. 1*, Հայպետհրատ, Երեւան, 1962, էջ 17:

կերացուում է որպէս հրեշտակ՝ թերատի աղջկայ կամ հարսի կերպարանքով: Երիտասարդ տղաները յաճախ էին պատմում գիւղերում վերջիններիս երեւալու եւ նրանց հետ իրենց հանդիպումների մասին.

Լուսաղբիւրին առջեւ կանգներ էր հարսնուկ մը, ափովը ջուր տուաւ, որ խմեմ: Նախ ուշադրութիւն չրրի, գիւղն հիւր եկած քաղքրցի կարծեցի: Շրթներս մօտեցուցի, ափին վարդին մէջ բացի, ի՞նչ տեսնեմ,- պճլտուն[12] փոքրիկ ողջ աստղ մը, երկնքի աղջիկներուն նշանը: Ուշաթափ ինկայ: Երբ արթնցայ, անհետացեր էր[13]:

*Ասպուածաշնչ*ում, Եզնիկ Կողբացու *Եղծ աղանդոցում*, միջնադարեան բազմաթիւ ձեռագրերում, Ալիշանի *Հին հաւատք կամ հեթանոսական կրօնք հայոց* աշխատութիւնում յիշատակուող եւ ջրերին առնչուող համբարու, յուշկապարիկ, պայեր, պարիկներ կոչուող ոգիների մասին հաւատալիքներն ու պատկերացումները չեն հասել մեր օրեր:

Ջրի ոգիներ անուանումը պայմանական է, քանի որ «*ջրերի եւ անտառների ոգիները յաճախ միախառնւում են իրար, նաեւ լեռների ոգիների հետ են առնչւում*»[14]: Այս մասին են վկայում **փերի** բառին հոմանիշ **լեռնակոյս, լեռնանուշ**[15] բառերը: Մանուկ Աբեղեանի դիտարկմամբ «*հայ ժողովրդական հաւատալիքներում նման ոգիների հաւատքն արդէն անհետանալու վրայ է, ուստի երկուսի (ջրերի եւ անտառների ոգիների) միջեւ եղած տարբերութիւնը յաճախ կորչում է*»[16]: Որպէս ոգիների բնակութեան վայրեր՝ ջրերի ու աղբիւրների կողքին յիշատակւում են կանաչ անտառները, հովիտներն ու մարգագետինները, նաեւ լեռներն ու հին ջրաղացները: Այսինքն, քննուող ոգիների խումբը երկկենցաղ է եւ մեր քննած զրոյցները փաստում են այս հանգամանքը:

Երուանդ Լալայեանը Ջաւախքից գրառել է մի շարք զրոյցներ ջրի ոգիների մասին, որոնք բաւականին ծաւալուն են եւ հետաքրքիր նիւթ են տալիս ուսումնասիրութեան համար: Աղեքսանդր Մխիթարեանցը զրոյցներ է ներկայացնում **հոթոթների, ճոճի պառաւների** եւ **հուրի փերիների** մասին: Ջրի պառաւների մասին խօսում է Յովհաննէս Կոստանեանցը[17]:

---

[12] Փայլփլուն:

[13] Շ. Նարդունի, «Սիրահարութիւն հրեշտակներու հետ», *Հայկաշէն, վարուցան գրականութեան եւ մշակոյթի, գիրք առաջին*, Փարիզ, 1942, էջ 24:

[14] Մ. Աբեղեան, Հայ ժողովրդական հավատքը, *Երկեր, հտր. Է*, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1975, էջ 82:

[15] Աշոտ Սուքիասեան, *Հայոց լեզուի հոմանիշների բացատրական բառարան*, 2րդ հրատ., ԵՊՀ հրատ., Երեւան, 2009, էջ 1164:

[16] Աբեղեան, *հտր. Է*, էջ 82:

[17] Աղեքսանդր Մխիթարեանց, «Փշրանք Շիրակի ամբարներից», *Էմինեան ազգագրական ժողովածու, Ա. հատոր*, Մոսկուա-Ալեքսանդրապոլ, 1901. նաեւ՝ Յովհաննէս Կոստանեանց, *Շիրակի լեգենդաներից եւ ժողովրդական կեանքից*, Աղեքսանդրապոլ, 1896:

Զրոյցների մէկ-երկու օրինակներ կան պահպանուած Նոր-Նախիջեւանի[18], Բորչալուի[19] ազգագրական եւ բանահիւսական նիւթերում: Ջրի ոգիների մասին զրոյցների եզակի նմուշներ է հաղորդում ազգագրագէտ-բանագէտ Յակոբ Չոլաքեանը, որոնք նա գրառել է Միջերկրական ծովի եզերքին տեղակայուած հայաբնակ վայրերից՝ հիմնականում Քեսապի շրջանից[20]:

Զրոյցների տեղաբաշխուածութիւնը աշխարհագրական առումով մեծ ընդգրկում ունի, սակայն քանակական առումով զրոյցները զիջում են ստորին առասպելաբանութեան մաս կազմող միւս ոգիների մասին առկայ զրոյցներին (սատանա, շուտ եւն.):

ՓԵՐԻՆԵՐԻ ԱՌԱՋԱՑՈՒՄԸ

Ժողովուրդը փերիներին կամ ջրի ոգիներին, երեւակայելով որպէս գեղեցկութեան կատարելատիպ, համարում է, որ նրանք մարդկային ծագում ունեն եւ անիծուած են ի վերուստ՝ Աստծոյ, Քրիստոսի կամ հրեշտակների կողմից: Ալիշանի, Լալայեանի[21], Բենսէի (Բուլանըխ)[22] եւ այլոց գրառումներում փերիների առաջացման առասպելատիպ զրոյցի հիմնական տարածուած մոտիւը հետեւեալն է.

> Երբ Նոյը տապանում էր, նրա որդիներից մէկը չկարողացաւ զգաստ մնալ եւ իր կնոջ անկողինը մտաւ: Այս սիրուց մի աղջիկ ծնուեց: Ջրերն իջնելուց յետոյ Նոյն իր զաւակներով դուրս եկաւ տապանից, իսկ փոքրիկ աղջիկը մնաց այնտեղ: Հրեշտակը Նոյին հարցրեց.
> - Տապանում էլ մարդ մնա՞ց:
> - Ոչ, - պատասխանեց Նոյը:
> - Եթէ մնաց, թող աներեւոյթ լինի:
> Փոքրիկ աղջիկն անմիջապէս աներեւոյթ եղաւ ու դարձաւ **փերի**: Այն ժամանակից նա ընկել է աշխարհ, տղամարդկանց քնած ժամին նրանց սէրն է վայելում եւ իր ցեղը բազմացնում[23]:

Այսօրինակ զրոյցներում Նոյեան տապանը պայմանականօրէն կարելի է դիտարկել որպէս սրբազան տարածք, որտեղ ի վերուստ պատուիրուած էր

---

[18] Երուանդ Շահազիզ, «Նոր-Նախիջեւանը եւ նորնախիջեւանցիք, սնոտիապաշտութիւններ, հաւատալիքներ եւ նախապաշարումներ», *Ազգագրական հանդէս, գ. IX*, Թիֆլիս, 1902, էջ 52-53:

[19] Ե. Լալայեան, *Երկեր, հտր. 3*, ՀՀ ԳԱԱ «Գիտութիւն» հրատ., Երեւան, 2004, էջ 211:

[20] Յակոբ Չոլաքեան, «Կասիոս լեռը Անտիոքի շրջանի հայոց աւանդազրոյցներուն եւ հաւատալիքներուն մէջ», *Հայ ժողովրդական մշակոյթ XVII. աւանդականը եւ արդիականը հայոց մշակոյթում*, ՀԱԻ հրատ., Երեւան, 2018, էջ 313-27:

[21] Ե. Լալայեան, *Երկեր, հտր. 1*, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., Երեւան, 1983, էջ 229:

[22] Բենսէ, «Բուլանըխ կամ Հարք գաւառ, Հաւատք», *Ազգագրական հանդէս*, գ. Զ, Թիֆլիս, 1900, էջ 11-12:

[23] Աւետիս Ահարոնեան, «Հայկական հին հաւատալիքները. բարի եւ չար ոգիներ», *Հայրենիք ամսագիր*, 2:1939, էջ 90:

մաքուր մնալ եւ առագաստ չմտնել: Ահա այս արգելքը խախտելու արդիւնք են փերիները՝ «թէ կաս՝ չիք դառնաս» բանաձեւի՝ անէծքի հետեւանք:

Ջաւախքում նաեւ պատմում էին. «*Քրիստոս օր տասնորդ ժողվէր կը, շատերը լաւ տղոցն ու աղջիկներին պահէին կը, օր ատոնցէն տասանորդ չտան: Օր ժողվեց պրծաւ, տեսաւ օր բիտտուն դարձըվորածներ են, հասկըցաւ թը բանը յուր տեղն է, լաւերը պահեր են, դարձաւ ըսեց թը՝ ալ չկա՞յ: Ըսին թը՝ չէ, չիք: «Թը կա, չիք դառնա» ըսաց Քրիստոսը: Օսահաթ ատ պահվըտածները չիք դառան, աներեւութացան: Տէյմ՚ օր հիմի ա ատոնք կան, կ՚ուտեն խմեն, աճին բազմանան կը. եւ օր ա սրտերն ուզէ, մարդոց էրեւին կը*»[24]: Նմանատիպ դիպաշար ունեցող զրոյցներով է բացատրւում հուրի փերիների աստուածային գեղեցկութիւն ունենալու հանգամանքը: Մինչեւ օրս էլ գեղեցիկ աղջիկներին բնութագրելիս՝ օգտագործում են հուրի, փերի եւ նմանօրինակ մակդիրներ:

ՋՐԻ ՈԳԻՆԵՐԻ ԱՐՏԱՔԻՆՆ ՈՒ ՅԱՏԿԱՆԻՇԵՐԸ

Ժողովրդական զրոյցներում ջրի ոգիների արտաքինի մասին պատկերացումներն ու նկարագրութիւնները երկիակադիր դրսեւորումներ ունեն: Ինչպէս իրանական, սլաւոնական եւ այլ ժողովուրդների հաւատալիքներում, այնպէս էլ ջրի ոգիների մասին հայկական **առաջին խմբի** զրոյցներում փերիներն ու ջրի աղջիկները պատկերացւում են աստուածային գեղեցկութեամբ. «*Պոյով, բուսով, շէկ-շէկ մազերը տէյ օտվիցը, ուսերու վրայով բաց ցկած: Հալաւ չունիր, գլխուն մազերը ծածկեր էին սաղ գյովտան: Պիճիլի թութլիկ օտվիքը օր գետին չէ՞ր դնէ, գիտես թը կանաչ կը բուսնիր տեղը: Թշերը կարմիր՝ մէկ-մէկ խնձոր, ունքերը՝ կամար, աչքերը՝ խոշոր, բերանը՝ պզտիկ, պռկները՝ վարդի թեր, գիտես, թը Աստուած բան չէր ունեցէ, ղալամ առեր, ատոր նշխեր էր*»[25]: Զրոյցներում փերիներին նկարագրելիս՝ ժողովուրդը յատուկ ուշադրութեամբ ընդգծում է վերջիններիս գեղեցկութիւնն ամբողջացնող երկու կարեւորագոյն յատկանիշ՝ **կապոյտ աչքերն** ու **շէկ** կամ **կարմիր մազերը**:

Աչքերը. Փերիների աչքերը սեւ չեն լինում, նրանք միշտ պատկերացւում են երկնագոյն աչքերով[26]: Կրակի կտոր այդ աղջիկների աչքերը «խորունկ ջրերի գոյն»[27] ունեն: Ժողովրդի այս համոզմունքը վերաբերում է ոչ միայն փերիներին, այլեւ չար ոգիներին ընդհանրապէս: Օրինակ, չար աչքը, ընկալուելով ու համարուելով չար ոգի, որը 666 (366) հիւանդութիւնների հետ շրջում էր աշխարհով մէկ, պատկերացւում էր որպէս շէկ մարդ՝ խաժ (կապոյտ) աչքերով[28]: Որոշ ազգագրական շրջաններում կապոյտ են նկա-

---

[24] Լալայեան, էջ 229:
[25] Նոյն, էջ 228:
[26] Ռոզմերի, «Կրօնքի հոգեպաշտական փուլի նշմարներ», *Բիւրակն*, 5:1899, էջ 69:
[27] Նարդունի, էջ 22:
[28] Աբեղեան, էջ 100-1:

րագրում նաեւ սատանաների ու քաջքերի աչքերը: Ատաբազարում *մեզնէ աղէկները* էգ, գեղեցիկ ու սիրուն ոգիներ են, երիտասարդների սիրահար, տղածգաններու թշնամի: Դեղին մազերով, կապոյտ աչքերով եւ սպիտակ այտերով են պատկերացուում[29]:

Կապուտաչեայ մարդկանց՝ չալաղապտուղներին, վերագրելով չար յատկանիշեր, համեմատում կամ նոյնացնում են անմաքուր ուժերի հետ. «*Կապուտ աչք ունեցող մարդն էլ սատանա կ'ընի. մարդս պէտք ա էդ տեսակից մուղաթ կենա, չունքի հազար մի ֆանդ ու ֆել կ'ունենա էդ թաւուր մարդը: Կապուտ աչքը չար կ'ընի. որ մարդու տա՝ էլ նրա բանը չի աջողի. քարին էլ որ տա, կը տրաքի: Ճամփա գնալիս որ մարդու տեսնի, բարի ճանապարհ ասի՝ էդ մարդուն ճամփին մի փորձանք ռաստ կը գա*»[30]: Հայ ժողովրդական հեքիաթներում ճանապարհ գնացողներին խորհուրդ են տալիս հեռու մնալ կապոյտ (չիլ, չալ, խաժ) աչք ունեցողներից՝ չարից, շառից ու փորձանքից զերծ մնալու համար[31]:

Ըստ ժողովրդական պատկերացումների՝ կապուտաչեայ փերիներն ու չարքերն իրենց զոհ են ընտրում կապուտաչեայ մարդկանց. «Թամարենց մին կապուտ աչքերով հարսը ունին. չարունք էր դպել»[32], կամ «*Ա՜խ, կապուտ աչքե՛ր, ձեզ ինչ սիրում ա՜ն, ձեզ ինչ սիրում ա՜ն: – Վէ կալան տարան գցան մըն չարաթ Սուրբ Օվանէսի դուռը, էլի նաղարա, զուռնով պար ածան, պար եկաւ, որ լաւացաւ*»[33]: Կապուտաչեայ փերիների գեղեցկութեամբ քողարկուած աչքերը որքան գրաւիչ են ու գայթակղիչ, նոյնքան չար են ու նենգամիտ:

Մազերը. ժողովրդական պատկերացումներում փերիները կամ ծովի մարերը յաճախ երեւակայւում են ջրերին ափամերձ մի քարի վրայ նստած՝ ոսկէ սանրով իրենց գեղեցիկ ու երկար մազերը սանրելիս: Տարբեր զրոյցներում ջրի ոգիների մազերը նկարագրւում են որպէս շատ երկար, մինչեւ ոտքերը հասնող, շէկ, կարմիր կամ ոսկէ, հարթ կամ գանգուր: Մազերի փարթամութիւնը ծածկում է նրանց մերկ մարմինը:

Առասպելաբանութեան մէջ մազերը համարւում են հոգու ապաստարան, մարդկային էութեան եւ կենսական ուժերի խտացման կէտ[34]: Եթէ ինչ որ մէկին յաջողուի բռնել կամ կտրել մազերից, ապա «փերուն իրենով կ'անի»: «*Ծովի մարերն երկարամազ կանանց նման են. նոցա ուժը մազերի մէջ*

---

[29] Ռոզմեէրի, էջ 69:

[30] Տ. Նաւասարդեանց, *Հայ ժողովրդական հէքիաթներ, եօթներորդ գիրք*, Թիֆլիս, 1891, էջ 27-28:

[31] «Չիլ ու Քեոսէ», *Հայ ժողովրդական հեքիաթներ, հտր. XVI, Վասպուրական*, ՀՀ ԳԱԱ «Գիտութիւն» հրատ., Երեւան, 2009, էջ 366:

[32] Նաւասարդեանց, էջ 27:

[33] Նոյն:

[34] Լ. Մկրտումեան, «Հայոց հրաշապատում հեքիաթի մի հերոսի վերլուծութեան փորձ», *Բանբեր Երեւանի համալսարանի*, 1(139):2013, էջ 25:

է: Եթէ նոցա մազերը կտրես, նոքա քեզ գերի կը լինին եւ զանազան ծառայութիւններ կ'անեն»[35]:

Սատանաների մասին նմանատիպ դիպաշարով մի զրոյց հաղորդում է Լալայեանը՝ Բորչալուից, որտեղ տանտէրը սատանային հպատակեցնում է իրեն՝ մազերից մի փունջ կտրելով: Եօթ տարի ծառայելուց յետոյ՝ սատանային է վերադարձնում իր մազափունջը, եւ վերջինս անհետանում է[36]: Պատահական չէ նաեւ, որ սատանաների սիրելի զբաղմունքը՝ ախոռներում ձիերի բաշը հիւսելը, նոյնպէս կապւում է մազի հետ:

Ջրի ոգիների մասին զրոյցների **երկրորդ խմբում** գործ ունենք իրենց գեղեցկութիւնից զրկուած փերիների հետ: Չար բնաւորութեան պատճառով, օրինակ, «***հնարքները*** *կորցնում են իրենց կուսական գեղեցկութիւնը եւ արդէն հանդէս են գալիս իբրեւ ջրի պառաւ կամ չար ոգիներին նմանուող էակներ»*[37]: Շիրակեան զրոյցներում ջրի ոգիները առաւելապէս տգեղ ու կեղտոտ արտաքին ունեն: «***Հոթոթները*** *սատանի պէս են, հմա սատանա չեն, ըդոնց հըմար Եարդէն քեռին կըսէր, թէ ծմեռ, գարուն չայերու եա ճիմ-ճիմոց մէջը կըբնակուին: Գոմէշը ինչպէս որ տլի մէջ կը թապլտի ու չամռակոլոլ էղած դուրս կուգա, էնպէս էլ հոթոթները ուրքէ գլոխ սեւ չամռով ծեփած են, աչք, էրես, քիթ, պռունկ տլի մէջ չի երեւա»*[38]: Նոյն միջավայրում են պատկերացւում նաեւ **ճոճի պառաւները՝** անճոռնի ու տգեղ արտաքինի նկարագրութեամբ. «*Չպլաղ, հասպ ու չաղ պառաւ էր. գլուխը բաղնըքի ղուբբէն քեզի օրինակ. ծծերը էնքան մենծ էին, ինչղ օր դօշին մէկ-մէկ գառ կապես... ընտուր գեօրա էլ ուր ու ծեռն էր...»*: Ասում են, թէ ամէն պատահածի բռնում, ներս են քաշում՝ մարդ թէ կենդանի[39]:

ՋՐԻ ՈԳԻՆԵՐԻ ԳՈՐԾԱՌՈՅԹՆԵՐԸ

Քննուող երկու խումբ ջրի ոգիներն ունեն գործառութային միեւնոյն նշանակութիւնը: Իգական սեռին պատկանող այս ոգիները սիրայօժար կամ բռնի ճանապարհով սիրային կապի մէջ են մտնում տղամարդկանց հետ՝ իրենց ցեղը բազմացնելու նպատակով: Ի տարբերութիւն կնոջ ու սատանայի սեռական կապի, որը հիմնականում լինում է «անհետեւանք», յաճախ փերիների եւ տղամարդկանց կապերն աւարտւում են որդեծնութեամբ: «*Չարոց ըրխէն իսանից կ'ընի: Իսանին խաբում ան, սատանախաբ ան գցում, իսանից ըրխայ ա ընում. հըմա հըմէն էգ ան ընում, - չարոց որձը չ'ինի»*[40]:

---

[35] Շահազիզ, էջ 52-53:

[36] Ե. Լալայեան, *Երկեր, հտր. 3*, ՀՀ ԳԱԱ «Գիտութիւն» հրատ., Երեւան, 2004, էջ 210:

[37] Աբեղեան, էջ 84:

[38] Մխիթարեանց, էջ 171:

[39] Նոյն, էջ 171-172:

[40] Նաւասարդեանց, էջ 29:

Առաջին խմբին պատկանող ոգիները՝ հուրի փերիները կամ յաւերժահարսները, ժողովրդական բնութագրմամբ ապրում են ուրախ ու թեթեւաբարոյ կեանքով: Լուսաստղի կամ լուսնի լոյսը տեսնելուն պէս (մինչեւ արեւածագը)՝ նրանք դուրս են գալիս «որսի»: «*Կանանց հանդերձներով գնում են գիւղ եւ առանց յայտնելու, թէ փերի ղզի են, ապրում են մի երիտասարդի հետ, որից եւ ունենում են որդիներ*»[41], կամ իրենց գեղեցկութեամբ հրապուրում են տղամարդկանց, տանում իրենց «եղնաղի» մէջ, քաշում ջրի տակ: Իրենց ընտրեալների հետ փերի ղզիներն ապրում են ստորջրեայ ապարանքներում եւ վայելում իրենց անտակ հարստութիւնը: Տուն վերադառնալ ցանկացող տղամարդկանց կաշառում են ոսկով, արծաթով ու ակնեղէնով, թողնում են գնալ՝ վերադառնալու եւ իրենց մասին չբարձրաձայնելու պայմանով: Խոստումը դրժողները պատժւում են. զրկւում են ապրուստից, հիւանդանում են, սկսում են հիւծուել եւ, իվերջոյ, մահանալ:

Քուրտ բանահիւսական նիւթերում հուրի փերիները նոյնպէս հանդէս են գալիս մարդկային կերպարանքով, ամուսնանում տղամարդկանց հետ[42]:

Ի տարբերութիւն փերիների ու յաւերժահարսների՝ ոգիների միւս խումբը ունի չարութեան աւելի ընդգծուած յատկանիշեր: Ապրելով բացառապէս տղմոտ ջրերում՝ «*թաքնւում են կամուրջների տակ, եւ երբ որեւէ մէկը մութ ժամանակ դրանց վրայով քայլի, նրան եւ մանաւանդ երեխաներին՝ քաշում են ջրի մէջ*»[43]:

Ասում են, թէ կամուրջի տակ ջրի պառաւ է կենում,
Եւ միշտ մթնով անցկենողին ջրի տակն է գլորում,
Դորա համար իմ հանգուցեալ մամս երբեք գիշերով
Անց չէր կենում ջրի կամուրջ, այլ գնում էր ցերեկով:

Նա ասում էր՝ շատ-շատերը զոհ են գնում պառաւին,
Գրողը տարած չար պառաւը շատ է խեղդում փոքրերին,
Բայց ես չանցայ այդ կամուրջով, այլ եզերքից ջուր առայ,
Եւ հազիւհազ մեծ սարսափով ահ ու դողով տուն ընկայ…[44]:

Որպէսզի երեխաները միայնակ չգնային գետը լողալու, կամ նոյնիսկ չանցնէին գետի կողքով՝ մոկսեցի կանայք վախեցնում էին **գետի պառաւ**ով: Հաւատացնում էին երեխաներին, որ վերջինս ունի «*մի երկար խացխան*[45]*: Երբ երեխաները էրթան գետի մօտ, նա իր խացխանի կեռը գցում է, երեխային քաշում տանում գետի մէջ ու խեղդում*»[46]: Յ. Դուրբախեանի հաղորդած զրոյցում մայրը իր՝ գետում լողալ ցանկացող որդուն սաստում

[41] Լալաեան, *Երկեր, հտր. 1*, էջ 229:
[42] Ա. Աւդալ, *Եզդի քրդերի հավատալիքները*, Երեւան, 2006, էջ 51:
[43] Աբեղեան, էջ 83:
[44] Կոստանեանց, էջ 75:
[45] Հացիան.- ակիշ, լաւաշը թոնրից հանելու յարմարանք՝ կեռ գլխիկով:
[46] Ա. Դարբինեան, «Մոկսի ազգագրական եւ բանահիւսական նիւթեր», Երեւան, 1960, ՀԱԻ արխիւ, ձեռագիր, մաս 5, թերթ 118:

է՝ ասելով, թէ «*ծովի մայրն իր երկար մազերի մէջ փաթաթելով՝ քեզ գերի յարակը կը տանի, կը խեղդի եւ կ'ուտի*»[47]:

Ժողովրդական զրոյցներում երեւակայւում են եւ տղամարդ փերիներ, որոնք սովորաբար ամուսնանում են փերի ղզիների հետ: Սակայն միքանիսը, բացառութիւն կազմելով, մարդկանց հանդերձներով գալիս են գիւղ, ամուսնանում գեղեցիկ աղջկայ հետ եւ միասին ապրում: Կանայք հաւատարիմ են լինում նրանց, քանի որ չգիտեն, թէ նրանք փերի են, բայց երբ իմանում են, ամէն կերպ աշխատում են սպանել նրանց՝ այրելով թոնրի մէջը:

Այս մասին է վկայում հետեւեալ զրոյցը.

> Վախտովմ' մէ լուսի կտոր աղջիկմ' ջուրը էրթցած վախտը ամէն անգամ տեսնի կը մէ ըռնտիկ տղամ' աղբրի քարին նստած: Մեմ' էրկուս, ասոնք իրար վրա սէր կապեն կը: Իրեք տարի սէր քաշելէն ետեւ պսակվին կը: Գիշերը եփ օր տղան ձեռքը աղջկա վրա կը դնէ, աղջկա ջանը դող գելլէ. գիտես թը փշերը ծակծկեն կը: Մէ օրմ' ա տղան լողանալու գլլի, աղջիկը դռան ծակէն կաշէ: Կաշէ, մեմ' ա տեսնի կ' օր տղան բիրտան օձ դառաւ, օլրվաւ, բաթաթ կտռաւ: Լողացաւ, լողացաւ, կենա նորէն մարդ դառաւ: Աղջիկը վախենա, վազզէ դրկցի կնկանը պատմէ կը: Ան ա կըսէ կը թը՝ կա չկա՝ ասիկ փերի է, կրնաս նէ՝ ցկէ՝ թնդիր վառէ, թըչը՝ քեզի ազատում չկա: Աղջիկը գուգա տուն, մէկալ օրը հաց էփած տեղը յարանութենով մարդուն կանչե կը քովը: Մեմ' ա մէ հացմ' կուտ ցկէ կ' ու մարդուն կըսէ թը՝ կախվի հանէ: Ան միամիտ կախվի կը թնդիր թը չը՝ ասիկ օտվներէն բռնէ շրջէ կը թնդիր ու խոնչան կորզէ կը բերնին, ինքն ա թողնէ փախչի կը: Քիչմ' էտեւ գուգան կաշեն օր փերին վառեր մոխիր է կռռէ:

Լալայեանը, խօսելով հայկական հեքիաթներում ջրի ոգիների առկայութեան մասին, գրում է.

> Փերի ղզիների մասին պատմում է նաեւ հեքիաթների մէջ, ուր ասում է, թէ նրանք երեւում են որպէս մի անպիտան գորտ, հաստ գաւազան (կոպալ), ափսէ եւ այլն: Մի առ ժամանակ սրանք այս կերպարանքով մնում են եւ փորձում, թէ նախազգալով յարգում են իրենց եւ այդ դրութեան մէջ: Եւ երբ փոքր ինչ յարգանք են վայելում, ծածկաբար մարդու կերպարանք են ընդունում, տունը աւելում, մաքրում, կերակուրն եփում եւ ապա նորից կերպարանքափոխւում ու պահ մտնում: Այսպէս նրանք շարունակում են, մինչեւ որ մարդիկ զարմացած դարան են մտնում եւ նրանց բռնում[48]:

Ժողովրդական առասպելատիպ զրոյցներ կան հայկական լեռնաշխարհի լճերի մասին, որոնք փոքր-ինչ տարբերւում են փերիների մասին պատմուող զրոյցներից: Այստեղ փերիների հետ հանդէս են գալիս ջրում ապրող կենդանիներ՝ ձիեր, գոմէշներ եւն.: Այդ զրոյցներից ամենաակնառուն այն էր, որ Առճակու ծովում ապրում են մի հրեղէն տղամարդ, մի հրեղէն կին եւ

---

[47] Յ. Դուրբախեան, «Ծերունի Սարգսի յիշատակարանը», *Աղբիւր, միամսեայ պատկերազարդ հրատարակութիւն երեխաների եւ դաստիարակների համար*, չորրորդ տարի, Ապրիլ, 4:1886, Թիֆլիզ, էջ 167-68:

[48] Լալայեան, *Երկեր, հտր. 1*, էջ 231-32:

մի հրեղէն ձի: Նոյնիսկ հաւատացողներ կային, որ հրեղէն ձիու խրխինջը «շատ-շատերը լսել են»: Հրեղէն ձիուն «տեսնողներ էլ էին եղել»: Սակայն հրեղէն մարդուն ու հրեղէն կնոջը «տեսնողներ» չէին եղել, բայց այդ փաստը մազաչափ անգամ չէր խախտել հաւատը նրանց գոյութեան նկատմամբ[49]: Պատմում էին, որ Սեւանայ լճում կան հրեղէն ձիեր եւ գոմէշներ, որոնք երբեմն դուրս են գալիս, զուգաւորում զամբիկներին եւ հասուն գոմշաձագերին, որոնցից հրեղէն սերունդ էր ստացւում: Ըստ նրանց՝ ճահճուտների վրայ քայլելը վտանգաւոր է, քանի որ նրա տմտմացող ծածկոյթի տակ չարքեր են ապրում, որոնք կարող են մարդուն ներս քաշելով՝ խեղդել[50]:

Ամբողջացնելով հայկական զրոյցներում ջրի ոգիների մասին պատկերացումներն ու առանձնայատկութիւնները՝ կարելի է ասել, որ քննուող խմբի ոգիներն իրենց բնոյթով երկկենցաղ են, ապրում են թէ՛ ջրում եւ թէ՛ ցամաքում: Զրոյցներում խնդրոյ առարկայ ոգիների արտաքինը եւ գործառոյթները ներկայացւում են երկիակադիր դրսեւորումներով: Զնաշխարհիկ գեղեցկութեան տէր փերիները տարփոգիներ են, իսկ տգեղ ու անճոռնի ջրի պառաւներն ունեն չարքերին բնորոշ բոլոր յատկանիշերը: Երկրորդ խմբի մէջ մտնող ջրի ոգիներին կարելի է դասել նաեւ մայրերի կողմից յօրինուած մանկասաստ ոգիների շարքին:

AN EXAMINATION OF THE TYPOLOGY AND FUNCTION OF MERMAIDS (BASED ON ARMENIAN FOLK TALES)

(Summary)

HASMIK GALSTYAN (hasmikgalstyan1979@gmail.com)

The popular stories about mermaids constitute a distinct group in the Armenian mythology of the underground and have their parallels in the beliefs of several nations of the world. Such popular stories are not high in number, though they are geographically quite widespread. The prototypes of the mermaids mentioned in written sources of the 1850s-early 1900s are found in the Bible as well as in the works of fifth century Armenian historiographers.

In the Armenian tales these mermaids are amphibious; they live both in water and on land. They are identified as two different characters: a) ugly, monstrous water witches, b) fairies of virgin beauty. The basic function of the first group is to hurt humans and children and cause them vital damage. The second group of mermaids distracts, seduces and misleads men to increase the number of their kind.

The tales describe the matchless beauty of the fairies and particularly single out their blue eyes and blond hair, which are interesting and warrant significant attention from the mythological perspective.

---

[49] Ս. Աւագեան, «Արճակ», *Հայ ազգագրութիւն եւ բանահիւսութիւն, նիւթեր եւ ուսումնասիրութիւններ, հտր. 8*, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., Երեւան, 1978, էջ 110:

[50] Մ. Ասատրեան, *Արծուանիստ*, «Լուսաբաց հրատ.», Երեւան, 2006, էջ 296: